

գառին խախացէն խառնուած լինէր անոր մէջ (անդ, 157): Շնորհալին անոնց ի պատասխանի՝ ինքն ալ կը կրկնէ Տարօնացւոյն յիշեալ համեմատութիւնը. բայց մի եւ նոյն ժամանակ խոստովանելով մատաղին մէջ գոյութիւնը «հին օրինէն» ծեսերու, եւ գառին արեան «հրէական» ծագումը (անդ, 160):

Արդարեւ պէտք է ըսել՝ թէ մեր այդ երկու ջատագովները կը կատարեն դերը փաստաբանի մը, որ հարկադրուած է չքմեղելու իւր պաշտպանեալը, եւ կամ գոնէ մեղմելու անոր յանցանքը՝ եթէ շատ յայտնի է: Նոյնպէս վարուեր է Անանիա Նարեկացին եւս՝ թոնդրակեցոց դէմ գրուածին մէջ, որոնք «հեթանոսական զոհ» կը համարէին հայ մատաղը: Այս անձանօթ գրութիւնն յիշելով Որբելեանը, ինքն ալ կը պաշտպանէ տոհմային աւանդութիւնը. բայց ոչ թէ ժխտելու տրկար զէնքին ապաւինելով, այլ իւր ընդաբոյս համարձակութեամբ դաւանելով մատաղին նոյնութիւնը հրէական զոհից հետ, եւ իբր այսպիսի ջատագովելով զայն, ինչպէս ըսի վերեւ (389): Գովելի է անշուշտ, նկատելով ժամանակի հանգամանքները, Տարօնացւոյն եւ Շնորհալւոյն ժխտողական գրութիւնն ալ. բայց հարկաւ ան-